ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<04>> փետրվարի 2013թ. N 41

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Գորկու փողոցի N 5 նրբանցքի N 20 տան բնակիչ Յուրիկ Արտեմի Ավանեսյանի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2013 թվականի հունվարի 23-ի եզրակացությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Յուրիկ Արտեմի Ավանեսյանին հատկացնել 30000 /երեսուն հազար/ դրամ միանվագ օգնություն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Ա. Հովհաննիսյան/՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ